Մեղադրանքն իրաւացի էր։

Գերմանիան հոգեբանական վրիպումների դասական հայրենիքն է։

Սակայն աւելի ահաւոր իր հետեւանքներով վրիպումն ունեցան Դաշնակիցները խաղաղութեան օրերին։

Եւ նրա հետեւանքներն անհամար են։

Երբ 1922 թուին բոցավառ Զմիւռնիայից բարձրանում էր վայնասունը կանանց ու երեխաների ու վայրագ թիւրքերը խողխողում էին աջ ու ձախ ու Դաշնակից պետութիւնների նաւատորմիղը ահարկու թնդանօթներով հանդարտ դիտում էր աննկարագրելի եղեռնը — նոյն օրը, նոյն ժամին, համայն Արեւելքում քաղաքակրթութիւնն էր մեռնում։

Երբ մօտ երկու միլիոն հայ ու յոյն խուճապով փախչում էին երեք չորս հազար տարուան իրենց հայրենիքից, նոյն օրերին Եւրոպան, իբր բարոյական բարձր հասկացողութիւն ջնջում էր Մերձաւոր եւ Հեռաւոր Արեւելքում։

Առաջաւոր Ասիայում եւ մասնաւորապէս Հայաստանում կատարուածները, Դաշնակից պետութիւնների տմարդութիւնը, Եւրոպայի խարդախութիւնը, ուխտադրուժ նենգութիւնները փոթորկուած ծովի պէս յորձանք տալով անցնում էին Միջերկրականի ափերից եւ ձրգւում հասնում էին մինչեւ Հնդկաստան, Չինաստան, Միջին Ասիայի մոնղոլական անապատները եւ բոլշեւիկեան Ռուսիոյ ստեպների խաժամուժներին։

Եւ ամէն կողմ նեղ աչքերով, ցցուն այտերով, հաստ շրթունքներով մարդիկ ժպտում էին ծածկամտօրէն։

«Ա՞յս է եղել Եւրոպան»...

Սուլթան Մահմուտ Բ.ի Պոլսի դրաւումից ի վեր (1453 թ.) Արեւմուտքը այս աստիճան նուաստացումի չէր ենթարկուել Արեւելքի բարբարոսութեան առջեւ։

Հայաստանում ու Սեւ ծովի ափերում թիւրքերը ոչ միայն հայ եւ յոյն ազգաբնակութիւնը ջնջեցին, ապա եւ Եւրոպան խողխողեցին համայն Ասիայում։

Այդ չէ բոլորը. Առաջաւոր Ասիայում դրբեթէ բնաջինջ եղաւ արիական ցեղը, եւրոպական քաղաքակրթութեան իսկական եւ միակ առաջապահը երեսուն դարերից ի վեր։

Փոքր Ասիայում եւ Հայաստանում Պալաս-Աթենասի եւ հայկական զգաստութեանց Մայր Անահիտի ժպիտը մեռաւ։

Քանի մը բութ, անկարեկից ճակատներ կռացան մի օր ինչ որ թղթերի, ինչ որ թուերի վրայ մի մեծ սեղանի առջեւ, եւ «ժողովուրդների փոխանակութեան» հրէշաւոր ծրագիրը կազմուեց։ Ու մարդկային բազմութիւններ — նախրի վերածած, հարիւր հազարներով չորթեցին իրենց բնակավայրերից եւ ցրուեցին աշխարհի չորս հողմերին։

Պատմութիւնը շատ էր տեսել ազգերի խմբական շարժումներ պատերազմի կամ նիւթական կարիքի երեսից, բայց այսպէս հանդարտօրէն եւ միանգամայն առանց որեւէ անհրաժեշտութեան հարիւր հազարներով աշխատաւոր մարդիկ արմատախիլ բոյսի պէս չորթել իրենց բնակավայրերից եւ քշել դէպի անծանօթ հորիզոններ, դա վերապահուած էր կատարել այս նոր դարի սկզբին յաղթական Դաշնակիցների ձեռքով։

Անհետացաւ Արիական ցեղը Մերձաւոր Արեւելքում։

Եւ անհետացաւ այնտեղից նաեւ Եւրոպան. այս է, որ չի հասկացան Դաշնակիցները։

Եւ այսպիսով Հայաստանին հասցրած վէրքը մարդկութեան ու մարդկային խղճմտանքին հասցրած վէրք եղաւ։

Քեմալիզմը տիեզերական յանցանք է եւ Դաշնակիցները նրա իսկական պատասխանատուն։

Մեր օրերը ոճիրներով բեռնաւորուած նաւերի են նման, որոնց սպասում է մի աւերիչ մրրիկ։

Սպանել հաւատն աշխարհում դէպի հաւաքականութեան որեւէ ուղղմտութիւն. տըմարդութիւնը պաշտօնական ակտերով սրբազործել, կողոպտել իր խնամքին ու հոգածութեան յանձնուած որբուկը, որի ծնողները իր համար մեռան — անհնարին ոճիր է այս եւ չի կարող մնալ անպատիժ։

Պատերազմի գլխաւոր նպատակ հռչակել մարդկութեան մի բարձր իդէալ, արդարութիւն՝ հալածուածներին, իրաւունք՝ իրաւա-